ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2450-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.02.2022թ. թիվ ԱԱ/06.3/2391-2022 գրության հիման վրա, 11.02.2022թ. թիվ 26/26-1/2450-2022 գրությամբ նախաձեռնել է «Ջիարջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ջիարջի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/70 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.02.2022թ. թիվ ԱԱ/06.3/2391-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Առողջապահության նախարարության 2022 թվականի կարիքների համար անհրաժեշտ հակաուռուցքային դեղեր ձեռքբերելու նպատակով իրականացվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ջիարջի» ՍՊԸ-ը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջները գնման ընթացակարգի գնահատումը կասեցվել է՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջինս շտկելու նպատակով: Սակայն սահմանված ժամկետում «Ջիարջի» ՍՊԸ-ը պահանաջվող շտկումները կատարել է մասնակի, որից հետո գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում՝ մերժել «Ջիարջի» ՍՊԸ-ը՝ միայն հրավերի պահանջներին չհամապատասխանող չափաբաժինների մասով:

Կից ներկայացվում է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/70 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2022թ. թվականի կարիքների համար հակաուռուցքային դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը կազմված չէ հրավերով սահմանված պահանջով, մասնավորապես՝ թերի է ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, բացի այդ, չգրանցված դեղերի մասով չի ներկայացված վերջիններիս մասով ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը հետաձգելու վերաբերյալ, մինչև Ընկերության կողմից սահմանված պատշաճ կարգով անհրաժեշտ տեղեկատվությունը էլեկտրոնային աճուրդ համակարգում ներկայացնելը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով Ընկերությանն ուղարկել է ծանուցում դիմում-հայտում շտկում կատարելու մասին, հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի Ջիարջի ՍՊԸ, Դուք դիմել եք ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր դիմում-հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները, 4, 19, 20, 22, 28, 35, 36 չափաբաժինների մասով: Հարգելի մասնակից խնդրում եմ շտկել Ձեր կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) հրավերով սահմանված չափանիշներով՝ նշելով ճիշտ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը (ոչ թե երկիրը): Ինչպես նաև ներկայացնել ՀՀ

կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման 2.2 կետի պահանջներին համապատասխան Ձեր կողմից առաջարկվող ապրանքի մասով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ն շտկումը կատարել է մասնակի, մասնավորապես շտկել է Հավելված 1.1-ը, սակայն չի կցել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը և որոշում կայացրել Ընկերության հայտը, բացառությամբ 4-րդ, 20-րդ, 22-րդ և 36-րդ չափաբաժինների մասով, մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2450-2022 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 04.02.2022թ. թիվ ԱԱ/06.3/2391-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ <u>գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է</u> պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է

ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2022թ. թվականի կարիքների համար հակաուռուցքային դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագարել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը կազմված չէ հրավերով սահմանված պահանջով, մասնավորապես՝ թերի է ներկայացված ապրանքի ամբողջական

նկարագիրը, բացի այդ, չգրանցված դեղերի մասով չի ներկայացված վերջիններիս մասով ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը հետաձգելու վերաբերյալ, մինչև Ընկերության կողմից սահմանված պատշաճ կարգով անհրաժեշտ տեղեկատվությունը էլեկտրոնային աճուրդ համակարգում ներկայացնելը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով Ընկերությանն ուղարկել է ծանուցում դիմում-հայտում շտկում կատարելու մասին, հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի Ջիարջի ՍՊԸ, Դուք դիմել եք ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր դիմում-հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները, 4, 19, 20, 22, 28, 35, 36 չափաբաժինների մասով: Հարգելի մասնակից խնդրում եմ շտկել Ձեր կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) հրավերով սահմանված չափանիշներով՝ նշելով ճիշտ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը (ոչ թե երկիրը): Ինչպես նաև ներկայացնել ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման 2.2 կետի պահանջներին համապատասխան Ձեր կողմից առաջարկվող ապրանքի մասով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ն շտկումը կատարել է մասնակի, մասնավորապես շտկել է Հավելված 1.1-ը, սակայն չի կցել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը և որոշում կայացրել Ընկերության հայտը, բացառությամբ 4-րդ, 20-րդ, 22-րդ և 36-րդ չափաբաժինների մասով, մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, ընդ որում՝ ծանուցման մեջ մանրամասն նշվել են շտկման ենթակա անհամապատասխանությունները, սակայն արձանագրված անհամապատասխանություններն ամբողջությամբ չի շտկել, այսինքն՝ «Ջիարջի» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2022թ. թիվ 26/26-1/2450-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**